# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 51-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ.բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխության մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ.բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ.Ա.Սանթրոսյան
3. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ.բյուջեի եկամուտների և ծախսերի ավելացման մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
4. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ.բյուջեի վարչական մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
5. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ.բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ.Ա.Սանթրոսյան
6. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ.բյուջեի եկամուտների և ծախսերի ավելացման մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
7. Դիլիջանի քաղաքային համայնքի տարածքում ինքնակամ շինությունները Դիլիջանի համայնքի գույքացանկում ընդգրկելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
8. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ.բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ.Ա.Սանթրոսյան

9. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ.բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
10. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ.բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
11. Ճաստիք հատկացնելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
12. Դիլիջանի քաղաքապետարան դիմած քաղաքի սոցիալապես անապահով վիճակում գտնվող քաղաքացիներին դրամական օգնություն տրամադրելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
13. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ.բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
14. Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1313.0քմ ընդհանուր մակերեսով թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գները հաստատելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
15. Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1738.7 քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու թույլտվություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
16. Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 88/12 հասցեի ավտոտնակը և վերջինիս սպասարկման 32.8 քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
17. Դիլիջանի համայնքի ավագանու 2014թ. մարտի 6-ի թիվ 49-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
18. Դիլիջանի 26 Կոմիսարների փողոցի թիվ 41/2 հասցեի կառույցը և վերջինիս սպասարկման հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
19. Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 76/15 հասցեի 40.8 քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 52-Ն

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014թվականի մարտի 19-ի թիվ 287-Ն որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 228-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2014 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թվականի վարչական բյուջեի «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ» եկամուտներն ավելացնել 2931454 .դրամ
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014 թվականի վարչական բյուջեի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» (բաժին 1խումբ 3 դաս3) ծախսերն ավելացնել 2931454.դրամ, որից՝

1) հոդված 4111 –2627000 դրամ
2) հոդված 4212 – 79454 դրամ
3) հոդված 4214 – 40000 դրամ
4) հոդված 4221 – 104000 դրամ
5) հոդված 4261 – 81000 դրամ

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

5. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 53-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության Շահումյան,Մյասնիկյան,Կալինինի և Կամո փողոցներով, քաղաքային շուկայի ոլորապտույտի և Մ-4 ավտոմայրուղով ավտոտրանսպորտի և հետիոտնի կանոնավոր և անվտանգ երթևեկությունն ապահովելու նպատակով, համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կարճ ժամկետներում կազմակերպել նշված փողոցների նշագծման աշխատանքները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության Շահումյան,Մյասնիկյան,Կալինինի և Կամո փողոցների, քաղաքային շուկայի ոլորապտույտի և Մ-4 ավտոմայրուղու հետիոտնի համար նախատեսված անցումների նշագծում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113_/ հատկացնել 812000 դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

5. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

7. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 54-Ն

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թվականի բյուջեում անհրաժեշտություն է առաջացել կատարել որոշ փոփոխություններ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թվականի բյուջեի վարչական մասի «Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ» եկամուտներն ավելացնել 10000000 դրամով
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թվականի բյուջեի վարչական մասի ծախսերն ավելացնել 10000000 դրամ, որից՝
1) «Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում» /բաժին 01 , խումբ 01 , դաս 01, / հոդված 4213-170000 4261-600000 դրամ :
2) «Աղբահանում» /բաժին 05 , խումբ 01, դաս01/ հոդված 4264 -989000 դրամ և հոդված 4267-500000 դրամ:
3) «Այլ մշակութային կազմակերպություններ» /բաժին 08 , խումբ 02, դաս04/ հոդված 4729 -780000 դրամ
4) «Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ» /բաժին 09 , խումբ 06, դաս01/ հոդված 4729 -1050000 դրամ:
5) «Հայաստանի Հանրապետության համայնքի պահուստային ֆոնդ»/բաժին 11 խումբ 01 դաս 02/ հոդված 4891 – 5911000 դրամ

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 55-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան քաղաքում համաքաղաքային սանիտարական մաքրման, բարեկարգման և կանաչապատման միամյակ կազմակերպելու և անցկացնելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել դիզելային վառելիքի և կենցաղային նյութերի գնում:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և դիզելային վառելիքի և կենցաղային նյութերի գնման նպատակով համայնքի 2014թ. բյուջեի վարչական մասից «Աղբահանում» /բաժին 05 , խումբ 01, դաս01/ հատկացնել հոդված 4264 -989000 դրամ և հոդված 4267-500000 դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

5. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

7. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 56-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Արցախի փողոցի 1-ին նրբանցքի բնակիչները ՝ քաղաքի ներհամայնքային նշանակության փողոցի նշված նրբանցքի ավտոճանապարհը վերանորոգելու խնդրանքով:
Ուսումնասիրությունից պարզվել է , որ նշված ճանապարհը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունից ենթարկվել է ֆիզիկական մաշվածության , առաջացել են խորը փոսեր, ինչը խանգարում է ավտոտրանսպորտի և հետիոտնի կանոնավոր և անվտանգ երթևեկությանը:Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել փողոցի նշված հատվածի խճապատման աշխատանքների գնում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Արցախի փողոցի 1-ին նրբանցքի ավտոճանապարհի խճապատում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 982852 դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

5. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 57-Ն

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի վարչական տարածքում գտնվող՝ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցումից Դիլիջանի քաղաքային համայնքի ֆոնդային բյուջե է վճարվել 10404837 դրամ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հուլիսի 27-ի թիվ 1098-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի, Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարը նշված ֆինանսական միջոցի օգտագործման վերաբերյալ ավագանու քննարկմանն է ներկայացրել կապիտալ ծախսերի երկու ծրագիր՝ «Դիլիջանի համայնքի Մանթաշյան փողոցի թիվ 1 տնից մինչև Մայաք-Նովա փողոց հատման երթևեկելի մասի հիմնանորոգում» և «Երկրագիտական թանգարանի հնագիտության և ազգագրության սրահների ցուցադրության կազմակերպման, կահավորման դիզայն»:

Ելնելով վերոգրյալից՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը, Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասի այլ հիմնական միջոցների իրացումից եկամուտներն ավելացնել 10405000 դրամով և այն ուղղել « Թանգարաններ և ցուցասրահներ »/բաժին 08, խումբ 02 դաս 02, հոդված 5122/, «Երկրագիտական թանգարանի հնագիտության և ազգագրության սրահների ցուցադրության կազմակերպման, կահավորման դիզայն» ծրագրի իրականացմանը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱՁՄԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 58-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ

- Դիլիջանի քաղաքային համայնքի Կամոյի փողոցի թիվ 110 հասցեի բնակելի տանը հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող <Բնակավայրերի հողերի> 11-003-0348-0016 ծածկագրով հողում քաղ.Հեղինե Թադևոսյանի կողմից կառուցված է ինքնակամ շինություն. մասնավորապես պարիսպ՝ մակերեսը 16,52քմ:
- Դիլիջանի քաղաքային համայնքի Սայաթ-Նովա փողոցի թիվ 152 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող <Բնակավայրերի հողերի> 11-003-0222-0029 ծածկագրով հողում քաղ.Վարուժան Ռևազյանի կողմից կառուցված է ինքնակամ շինություն. մասնավորապես ավտոտնակ՝ մակերեսը 26,4քմ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջանի քաղաքապետարանի գույքացանկում համապատասխան հետևյալ արժեքով ընդգրկել.
- Դիլիջանի քաղաքային համայնքի Կամոյի փողոցի թիվ 110 հասցեի բնակելի տանը հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող <Բնակավայրերի հողերի> 11-003-0348-0016 ծածկագրով հողում կառուցված ինքնակամ շինություն. մասնավորապես պարիսպ՝ 16,52քմ մակերեսով – 42952 դրամ:
- Դիլիջանի քաղաքային համայնքի Սայաթ-Նովա փողոցի թիվ 152 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող <Բնակավայրերի հողերի> 11-003-0222-0029 ծածկագրով հողում կառուցված ինքնակամ շինություն. մասնավորապես ավտոտնակ՝26,4 մակերեսով – 34320 դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 59-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել «Դիլիջանի Հովհ,Շարամբեյանի անվան գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրինությունը հայտնելով, որ ջեռուցման կաթսայի անսարքության պատճառով դպրոցում կան ջեռուցման խնդիրներ:Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել ուսումնասիրել և կատարել նորոգման աշխատանքներ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջանի Հովհ,Շարամբեյանի անվան գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ջեռուցման կաթսայի նորոգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից «Արտադպրոցական դաստիարակություն» /բաժին 09 , խումբ 05 դաս 01, հոդված 5122/ հատկացնել 99600 դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

5. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 60-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Գայի փողոցի թիվ 31 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի բնակիչները նշված շենքի տանիքը վերանորոգելու խնդրանքով:
Ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված շենքի տանիքը տարիների ընթացքում չվերանորոգվելու, չպահպանվելու հետևանքով, ինչպես նաև արտաքին ազդեցություններից քայքայվել է, ինչը վնաս է հասցնում բնակիչների անվտանգությանը, ինչպես նաև բնաֆոնդին:
Նշված թերությունները վերացնելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կազմակերպել նշված տանիքի նորոգման աշխատանքների գնում:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Գայի փողոցի թիվ 31 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի նորոգում» աշխատանքների գնման նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից «Բնակարանային շինարարություն» /բաժին 06 , խումբ 01, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 11355200 դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 61-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Շահումյան փողոցի թիվ 13 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի բնակիչները նշված շենքի տանիքը վերանորոգելու խնդրանքով:
Ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված շենքի տանիքը տարիների ընթացքում չվերանորոգվելու, չպահպանվելու հետևանքով, ինչպես նաև արտաքին ազդեցություններից քայքայվել է, ինչը վնաս է հասցնում բնակիչների անվտանգությանը, ինչպես նաև բնակֆոնդին:
Նշված թերությունները վերացնելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կազմակերպել նշված տանիքի նորոգման աշխատանքների զնում:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 13 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի նորոգում» աշխատանքների գնման նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից <Բնակարանային շինարարություն> /բաժին 06 , խումբ 01, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 6230530 դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱՖԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 62-Ա

## ՀԱՍՏԻՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան քաղաքի աղբահանության աշխատանքները առավել արդյունավետ և ժամանակին կատարելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել Դիլիջանի քաղաքապետարանի աշխատակազմին հատկացնել լրացուցիչ 8 հաստիք՝ աղբահանության աշխատանքների իրականացման համար:
Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2013թվականի նոյեմբերի 14-ի «Դիլիջանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 207-Ա որոշման 2-րդ հավելվածում կատարել լրացում և Դիլիջանի քաղաքապետարանի աշխատակազմին հատկացնել 8 հաստիք համաձայն կից հավելվածի:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

5. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

7. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Հավելված
Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու
2014 թվականի ապրիլի 1-ի թիվ 62-Ա որոշման

# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ |
|---|---|---|
| Վարորդ | 3 | 135000 |
| Վարորդ | 1 | 95000 |
| Բանվոր | 4 | 95000 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 63-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ԴԻՄԱԾ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան և համայնքի ավագանուն են դիմել թվով 15 քաղաքացիներ հայտնելով, որ փաստացի գտնվում են սոցիալապես անապահով վիճակում և դիմումներում նշված խնդիրները ֆինանսական տեսանկյունից չեն կարող լուծել սեփական միջոցներով :

Համայնքի ղեկավարը քաղաքացիների դիմումները ներկայացրել է Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը ՝ դիմումներում նշված խնդիրների լուծմանը աջակցելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ներքոնշյալ քաղաքացիներին ցույց տալ դրամական օգնություն, այդ նպատակի համար Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի «Ընտանիքի անդամներ և զավակներ» /բաժին 10 խումբ 4, դաս 1/ 4729 հոդվածից հատկացնելով 190000 դրամ, այդ թվում ՝

- ք.Դիլիջան Գայի 84 բն. 12 հասցեի բնակիչ Կարինե Հայրապետյանին -10000 դրամ
- ք.Դիլիջան Շահումյան 12 բն. 12 հասցեի բնակիչ Արաքսի Կիրակոսյանին -10000 դրամ
- ք.Դիլիջան Հակոբջանյան 14 հասցեի բնակիչՎազգեն Փայտյանին -10000 դրամ
- ք.Դիլիջան Շամախյան 3Ա բն,12 հասցեի բնակիչ Ալվարդ Ասատուրյանին – 10000 դրամ
- ք.Դիլիջան Կալինինի 222 հասցեի բնակիչ Հրածին Մնացականյանին – 10000 դրամ
- ք.Դիլիջան Բարեկամության 1 բն,1 հասցեի բնակիչ Աշոտ Ղուկասյանին – 15000 դրամ
- ք.Դիլիջան Մոլդովական 5. Բն, 3 հասցեի բնակիչ Ժենյա Դավթյանին – 20000 դրամ
- ք.Դիլիջան Արցախի 2 նրբ,4 հասցեի բնակիչ Հրանուշ Դավթյանին -10000 դրամ
- ք.Դիլիջան Արցախի 1-ին նրբ,4 հասցեի բնակիչ Լիդա Գուլինյանին -15000 դրամ
- Ք.Դիլիջան Հակոբջանյան 37 հասցեի բնակիչ Մելանյա Հարությունյանին - 15000 դրամ
- ք.Դիլիջան Շահումյան 1 Ա բն. 34 հասցեի բնակիչ Անահիտ Հակոբյանին -15000 դրամ
- Ք.Դիլիջան Գայի 78 բն, 23 հասցեի բնակիչ Սուսաննա Մուրադյանին - 15000 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 64-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Օրջոնիկիձե փողոցի թիվ 81 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի և Թբիլիսյան խճուղի թիվ 12 շենքի բնակիչները ՝ նշված շենքերի տանիքները վերանորոգելու խնդրանքով:
Ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված շենքերի տանիքները տարիների ընթացքում չվերանորոգվելու, չպահպանվելու հետևանքով, ինչպես նաև արտաքին ազդեցություններից քայքայվել են,ինչը վնաս է հասցնում բնակիչների անվտանգությանը,ինչպես նաև բնակֆոնդին:
Նշված թերությունները վերացնելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կազմակերպել նշված տանիքների նորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման աշխատանքների գնում:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձե փողոցի թիվ 81 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի և Թբիլիսյան խճուղի թիվ 12 շենքի տանիքների նորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և մշակում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից «Բնակարանային շինարարություն» /բաժին 06 , խումբ 01, դաս 01, հոդված 5134/ հատկացնել 300000 դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 65-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ" 1313.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 3 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2014թ. մարտի 31-ի թիվ 119-Ա որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1313.0քմ ընդհանուր մակերեսով թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտերով, պայմաններով և մեկնարկային գներով: Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջան համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1313.0քմ ընդհանուր մակերեսով, թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրել և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

Աղյուսակ.
Դիլիջանի քաղաքային համայնքի ավա[...]
2014թ. ապրիլի 01-ի թիվ 65-Ա [...]

Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Հողամասի տրամադրման ժամկետը | Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գին | Սա[...] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 4/ՔԿ-14/ | Թբիլիսյան 14/6 | 0208-0009 | 208,0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը | 35 360 դրամ | |
| 2 | Լոտ 5/ՔԿ-14/ | Թբիլիսյան 14/7 | 0208-0007 | 105,0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը | 29 925 դրամ | |
| 3 | Լոտ 6/ՔԿ-14/ | Թբիլիսյան 54/3 | 0687-0009 | 1 000,0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը | 40 000 դրամ | |

*Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* *Ա. Մարտիրոսյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 66-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ "ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ" 1738.7ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 4 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2014թ. մարտի 31-ի թիվ 116-Ա որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող <<Բնակավայրերի հողերից>> 1738.7քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջանի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող <<Բնակավայրերի հողերից>> 1738.7քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը աճուրդի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

Առյուսակ.

ՀՀ Դիլիջանի համայնքի ավագանու 2014թ.
մարտի 01-ի թիվ 66-Ա որոշման

# Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի աճուրդ-վաճառք

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 3/ՔՀ-14/ | Վասիլևի 44/4 | 0378-0016 | 260,0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 650 000 | չկան |
| 2 | Լոտ 4/ՔՀ-14/ | Կամոյի 131/5 | 0341-0009 | 250,0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 625 000 | չկան |
| 3 | Լոտ 5/ՔՀ-14/ | Մոլդովական 12/15 | 0074-0039 | 228,7 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 571 750 | չկան |
| 4 | Լոտ 6/ՔՀ-14/ | Անդրանիկի 4-րդ նրբ. 2/2 | 0087-0087 | 1 000,0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 2 500 000 | չկան |

*Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* *Ա. Մարտիրոսյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 67-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 88/12 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 32.8ՔՄ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2014թ. փետրվարի 25-ի թիվ 55-Ա որոշմամբ, քաղ. Դավիթ Գրիշայի Մարտիրոսյանի կողմից Գետափնյա փողոցի թիվ 88/12 հասցեում ինքնակամ կառուցված 32.8քմ մակերեսով ավտոտնակի /հաշվարկված է արտաքին չափերով/ նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփ. վկայական՝ թիվ 04032014-11-0019/:

Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, վերոհիշյալ 32.8քմ մակերեսով ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 32.8քմ մակերեսով հողամասն օտարել քաղ. Դավիթ Մարտիրոսյանին, համապատասխանաբար, 55760 դրամ և 62780 դրամ արժեքներով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Գետափնյա փողոցի թիվ 88/12 հասցեում գտնվող ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 32.8քմ հողամասը, համապատասխանաբար, 55760 դրամ և 62780 դրամ արժեքներով, քաղ. Դավիթ Մարտիրոսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# ՈՐՈՇՈՒՄ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 68-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014Թ. ՄԱՐՏԻ 6-Ի ԹԻՎ 49-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի փոփոխումն Դիլիջանի համայնքի ավագանու 2014թ. մարտի 6-ի <<Դիլիջանի Թբիլիսյան խճուղու թիվ 7 հասցեի բենզալցակայան-ավտոտեխսպասարկման օբյեկտը եվ վերջինիս սպասարկման 2071.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին>> թիվ 49-Ա որոշման և ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջանի համայնքի ավագանու 2014թ. մարտի 6-ի <<Դիլիջանի Թբիլիսյան խճուղու թիվ 7 հասցեի բենզալցակայան-ավտոտեխսպասարկման օբյեկտը եվ վերջինիս սպասարկման 2071.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին>> թիվ 49-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն, մասնավորապես՝ որոշման մեջ նշված <<2071.0քմ>> հողամասի մակերեսը փոխարինել <<1073.0քմ>>-ով:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

5. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

7. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

8. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 69-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 41/2 ՀԱՍՑԵԻ ԿԱՌՈՒՅՑԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2014թ. փետրվարի 26-ի թիվ 57-Ա որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից 26 Կոմիսարների փողոցի թիվ 41/1 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի ինքնակամ կառուցված մասնաշենքի՝ համայնքային հողում կառուցված մասի (26 Կոմիսարների փողոցի թիվ 41/2 հասցեով, 376.39քմ հատակագծային ընդհանուր արտաքին մակերեսով) նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփ. վկայական՝ թիվ 06032014-11-0002/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկին՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, վերոհիշյալ 26 Կոմիսարների փողոցի թիվ 41/2 հասցեով, 376.39քմ հատակագծային ընդհանուր արտաքին մակերեսով կառույցը /բազմաբնակարան բնակելի շենքի ինքնակամ կառուցված մասնաշենքի՝ համայնքային հողում կառուցված մաս/ և վերջինիս զբաղեցրած 93.88քմ մակերեսով հողամասն օտարել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկին, համապատասխանաբար, 1467921 դրամ և 116599 դրամ արժեքներով:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Դիլիջանի 26 Կոմիսարների փողոցի թիվ 41/2 հասցեով, 376.39քմ հատակագծային ընդհանուր արտաքին մակերեսով կառույցը /բազմաբնակարան բնակելի շենքի ինքնակամ կառուցված մասնաշենքի՝ համայնքային հողում կառուցված մաս/ և վերջինիս զբաղեցրած 93.88քմ մակերեսով հողամասը, համապատասխանաբար, 1467921 դրամ և 116599 դրամ արժեքներով, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2014թվականի N 70-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 76/15 ՀԱՍՑԵԻ 40.8ՔՄ ՀՈՂԱՄԱՍ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին են դիմել քաղաքացիներ Տիգրան Հրաչյայի Խաչատրյանը և Նունե Նորայրի Մակարյանը՝ Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 76/11 հասցեի, իրենց ընդհանուր համատեղ սեփականությունը հանդիսացող ավտոտնակի 40.8քմ սպասարկման հողամասին կից գտնվող, Մյասնիկյան փողոցի թիվ 76/15 հասցեի 40.8քմ մակերեսով հողամասն ընդլայնման կարգով իրենց օտարելու խնդրանքով:

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 40.8քմ մակերեսով հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը: Այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, վերը նշված ավտոտնակի սեփականատերեր Տիգրան Խաչատրյանին և Նունե Մակարյանին: Նշված հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առանձնացված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման իններորդ գոտում:

Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 76/15 հասցեի 40.8քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 78092 դրամ արժեքով օտարել քաղաքացիներ Տիգրան Խաչատրյանին և Նունե Մակարյանին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 76/15 հասցեի 40.8քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 78092 դրամ արժեքով, քաղաքացիներ Տիգրան Խաչատրյանին և Նունե Մակարյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը: